ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

ԱՐԾԻՎՆԵՐԸ ԲԱՐՁՈՒՆՔ ԵՆ ՏԵՆՉՈՒՄ

Երևանի Եռաբլուրի հուշահամալիրում, ուր հանգչում են մեր հերոսները, օգոստոսի 18-ին ազատամարտիկներն ու հարազատները հրաժեշտ էին տալիս Արցախում զոհված քսանվեցամյա Սերգեյ Փաշայի Պետրոսյանին: Ցնցող էին հրացանների համազարկերը, ազատամարտիկների արծվենի հայացքն ու հրեղեն խոսքը: Կոփվներում թրծված տղաները երդվում են պայքարը շարունակել մինչև հաղթանակ, կռվելով նաև զոհվածների փոխարեն:

Սերգեյը ծնվել է մտավորականի ընտանիքում: Ծնողները 60-ական թվականների սկզբներին Մարտակերտից տեղափոխվել էին Երևան: Հայրը քսանհինգ տարի «Հայէլեկտրոյի» առաջատար մասնագետներից է, մայրը՝ ուսուցչուհի 162-րդ դպրոցում, ուր սովորել են նրա երեք որդիները: Սերգեյը հետո ուսանեց թեթև արդյունաբերության տեխնիկումում, դարձավ կոշիկի առաջատար մոդելյոր: Ծնորհալի տղան միաժամանակ ավարտեց երաժշտական դպրոց, նվագում էր կիթառի վրա, երգում: Ամուր էր ֆիզիկապես, երեք տարի զբաղվել էր կարատեով, գերազանց լողորդ էր: Բնավորությամբ մարդամոտ էր, կատակասեր, որ յորահատուկ է մոխրաթաղցիներին: Մի խոսքով, ամեն ինչով պատրաստ էր լիարժեք կյանքով ապրելու համար: Սակայն Արցախը՝ պապերի հայրենիքը, վտանգված էր: Ու կյանքով ապեցուն տղան տենչում էր միանալ Արցախի ազատամարտիկներին, բայց ինչպե՞ս այդ մասին ասեր մորը: Նրան զայրացնում էր հայատառանաբնակ շատ ղարաբաղցիների անտարբերությունը Արցախի ճակատագրի նկատմամբ: Չինվորագրվեց Արցախ մեկնող աֆղանցի դեսանտայինների ջոկատին ու սկսեց պատրաստվել: Տիրապետեց զենքին, կռվելու գաղտնիքներին: Հադրութ մեկնող կամավորների հետ վարժվում էր օր ու գիշեր: Դա այն օրերին էր, երբ ընկել էր Մարտակերտը, իր սիրելի Մոխրաթաղը: Մեկնեցին Արցախ:

Ջոկատը 40 օր պաշտպանում էր Հադրութի աջ կողմում գտնվող Խորհատ կոչվող բարձունքը: Դա իշխող դիրք էր, որը գրավելով, թուրքը կարող էր տիրել նաև շրջկենտրոնին: Բարձունքը հուսալի ձեռքերում էր: Հերթական մի օր, դա օգոստոսի 15-ին էր, լուսաբացին թուրքերը կատաղի գրոհներ սկսեցին: Տղաները մի քանի անգամ ետ շպրտեցին նրանց: Սերգեյը, ընկերներին վկայությամբ, ավտոմատից կրակում էր ու... երգում: Ինչպես «Լուսաբացները այստեղ խաղաղ են» կինոնկարում: Մարտն անհավասար էր: Թուրքերը մոտեցան ջոկատի դիրքերին: Տղաներն անգամ չհասցրին զգուշացնել Սերգեյին՝ նահանջի մասին, իսկ նա շարունակում էր կրակել: Արծիվը չէր կարող թշնամուն թողնել բարձունքը: Դադարեցրեց երգը և ազդանշանով օգնության կանչեց: Կռիվը շարունակվեց ևս մեկ ժամ: Հանկարծ, տղաներից մի քանի քայլ հեռու տեսը Սերգեյի ավտոմատը: Ատասնամարտիկը մահացու վերք ստացավ գլխից: Օգնության եկած տղաները պահեցին բարձունքը՝ Սերգեյի բարձունքը: Ինչ իմանաս, գուցե այն հետո այդպես էլ կոչվի:

...Ազատամարտիկները համազարկերով հրաժեշտ տվին Սերգեյին՝ իրենց ընկերոջը, քաջագույնին: Նրան, որը թողել էր Երևանը, ծերացող ծնողներին, անգամ սիրած աղջկան, նաև կիթառը, պապի սիրած արհեստը: Նա շատ էր տագնապում, որ կկորցնենք Արցախը: Ճակատ մեկնելուց առաջ խնդրել էր հորը՝ ուշադիր լինել մոր նկատմամբ: Իսկ հորից թաքուն խնդրել էր մորը, որ եթե իր հետ մի բան պատահի, շատ չվշտանքի հորը:

Հրաժեշտի ժամին, ազատամարտիկներից մեկը, դիմելով Սերգեյի մորն, ասաց. «Հպարտացեք, տիկին Նորա, Սերգեյը ձեր հոգու ծնունդն է, ձեր ցանած հունդերի չթառամող ծաղիկը: Նա ձեր հոգու թռիչքն է, որ հասնում է արծիվներին...»:

Ավելի լավ չես ասի: Նա ապրեց բարձր խոհերով, կռվեց և զոհվեց բարձունքի վրա: Հանուն արցախական բարձրիկ լեռների:

Սեդրակ ՆԱՆԱԳՈՒԼՅԱՆ